ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի հունվարի 30-ին:

Նիստին մասնակցել են բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները և տնօրենի տեղակալ՝ Հ.Մինասյանը:

«**Օրակարգում՝**

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Նախագծային աշխատանքների մեկնարկի և իրականացման ընթացքի վերաբերյալ (զեկուցող՝ Ա.Սահակյան)
4. Հայոց բանակի կազմավորման 34-րդ տարելիցին նվիրված միջոցառում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
5. Փետրվար ամսվա ընթացքում միջոցառումների պլանավորում (զեկուցող՝ մասնախմբի անդամներ):
6. ԱՈՒՊ-ների քննարկման ժամանակացույցի ներկայացում և իրականացում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
7. ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում փետրվար ամսում պլանավորած առարկաների դասավանդման որակի ուսումնասիրում (զեկուցող՝ Ա.Սահակյան):

Լսեցին՝

1. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց նիստի օրակարգը բաղկացած 7 հարցից:

Լսեցին՝

2. Մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են. հաշվետվություններում առկա թերությունները շտկվել և ներկայացվել են տնօրենին՝ հաստատման, 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանները սահմանված ժամկետում ներբեռնվել են դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ, իսկ բնագիտական առարկաների շրջանակում իրականացվելիք նախագծային աշխատանքների թեմաները, դասարանները և ժամկետները հաստատվել են համաձայն ներկայացված ժամանակացույցի, կազմվել են ուսումնական նախագծերի պլանները և ներկայացվել տնօրենի հաստատմանը:

Լսեցին՝

3. Մասնախմբի ղեկավար Ա. Սահակյանը ցուցաբերել նշեց, որ ցուցաբերում է հետևողականություն նախագծային աշխատանքների կազմակերպման և իրականացման հարցում, շարունակաբար մշտադիտարկում է դրանց ընթացքը՝ ինչպես կազմակերպչական, այնպես էլ բովանդակային մասերով: Տեղեկացրեց, որ 21.01.2026-ին արդեն մեկնարկել է «Ես և շրջակա աշխարհը» առարկայի «Բույսեր» թեմայով նախագծային աշխատանքը, իսկ «Բնագիտություն»

առարկայի «Կաթնասուններ» թեմայով նախագիծը նախատեսվում է մեկնարկել 03.02.2026-ին: Նշեց, որ մեկնարկի ժամկետները պահպանվել են, ձեռք են բերվել անհրաժեշտ նյութերը:

Լսեցին՝

4. Մասնախմբի ղեկավար Ա. Սահակյանը զեկուցեց, որ հայոց բանակի օրվան նվիրված միջոցառմանը մասնախմբի անդամները ցուցաբերել են ակտիվ և պատասխանատու մասնակցություն, մասնավորապես՝ Ա. Անդրեասյանը և Ա. Խուբլարյանը, ինչի արդյունքում իրականացվել է հետաքրքիր և ուսուցողական միջոցառում, և ամբողջ ընթացքում պահպանվել է բարձր մարտական ոգի:

Լսեցին՝

5. Մասնախմբի ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց փետրվար ամսվա ընթացքում պլանավորված միջոցառումները, այդ թվում՝ առաջարկեց պահպանել գիրք նվիրելու ավանդույթը և այն իրականացնել փետրվար ամսին:

Լսեցին՝

6. Մասնախմբի ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկման ժամանակացույցի նախագիծը, որը նախատեսվում է համաձայնեցնել տնօրինության հետ, և հորդորեց բնագիտական առարկաներ մասնախմբի անդամներին պատշաճ կերպով մասնակցել նախատեսված քննարկումներին:

Լսեցին՝

7. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց, որ ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում փետրվար ամսում պլանավորած ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրումը, տնօրենի հետ խորհրդակցության արդյունքում, որոշվել է տեղափոխել մարտ ամիս:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի հունվարի 30-ի նիստի օրակարգը:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ մասնախմբի ղեկավարի զեկուցումը՝ արձանագրելով, որ իրականացված աշխատանքների արդյունքները եղել են գոհացնող:
3. Ապահովել «Ես և շրջակա աշխարհը» և «Բնագիտություն» առարկաների շրջանակում իրականացվող նախագծային աշխատանքների պատշաճ կազմակերպումն ու իրականացումը և վերահսկել դրանց ընթացքը՝ խթանելով աշխատանքների արդյունավետությունը:
4. Ընդունել ի գիտություն հայոց բանակի օրվան նվիրված միջոցառմանը մասնախմբի անդամների ցուցաբերած ակտիվ և պատասխանատու մասնակցությունը, ինչպես նաև շարունակել նմանատիպ կրթադաստիարակչական միջոցառումների կազմակերպումը:
5. Պահպանել գիրք նվիրելու ավանդույթը և փետրվար ամսին կազմակերպել համապատասխան միջոցառում՝ համաձայն ներկայացված առաջարկի:
6. ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկման ժամանակացույցի նախագիծը ներկայացնել տնօրինությանը՝ համաձայնեցման, և հաստատումից հետո ապահովել իրենց մասնակցությունը բոլոր հանդիպումներին:

7. Ընդունել ի գիտություն ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրումն մարտ ամիս տեղափոխելու հանգամանքը և դրան ընդառաջ հաջորդ նիստին ներկայացնել մարտ ամսին այդ շրջանակում իրականացվելիք դասալսումների ժամանակացույցը:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ Ա.Սահակյան

Քարտուղար՝ Ա.Խուբլարյան

02.02.2026